



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին
ատյանի /վարչական/ դատարանի վճիռ
վարչական գործ թիվ 0116/05/2009թ.
դատավոր՝ Մ.Ստեփանյան

Վարչական գործ թիվ 0116/05/2009թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«26» մայիսի 2010թ.

ք.Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը՝ վճռաբեկության կարգով, կազմով՝

Նախագահությամբ դատավոր՝
Մասնակցությամբ դատավորներ՝

Զ.Օհանյանի
Գ.Գրիգորյանի
Ի.Կարապետյանի

Դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Ռոզա Համբարձումի Բաբայանի ընդդեմ ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ և Էմմա Ամիրի Անդրյանի՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման միասնական 4-23 մատյանի 079915 համարի տակ գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու և հողամասն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու մասին վարչական գործով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի /վարչական/ դատարանի 2010թ. մարտի 25-ի վճռի դեմ Էմմա Ամիրի Անդրյանի ներկայացուցիչ Արմեն Թարխանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան հայցվորը խնդրել է մասնակիորեն անվավեր ճանաչել Ստեփանակերտ քաղաքի Մ.Նեյման փողոցի թիվ 28 տան 1/2 մասի նկատմամբ Էմմա Ամիրի Անդրյանի սեփականության իրավունքի ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման իրավունքների գրանցման միասնական թիվ 4-23 մատյանի թիվ 079915 համարի տակ կատարած գրանցումը՝ հայցվորին պատկանող բնակելի տարածքի 1.43 մետր լայնությամբ և 5.22 մետր երկարությամբ տարածքի մասով, և միաժամանակ

պարտավորեցնել Էմմա Անդրյանին վերադարձնել ամբողջ տնամերձի երկարությամբ 1.43 մետր լայնությամբ տարածքը:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2010թ. մարտի 25-ի վճռով ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման միասնական 4-23 մատյանի 079915 համարի տակ գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու մասով գործի վարույթը կարճել է՝ հայցվորի հայցից հրաժարվելու հիմքով, մնացած մասով հայցը բավարարել:

Նշված վճռի դեմ վճռաբեկ բողոք է բերել Էմմա Անդրյանի ներկայացուցիչ Արմեն Թարխանյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել հայցվորի ներկայացուցիչ Արտյուշա Մադաթյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վարչական դատարանը չի կիրառել կիրառման ենթակա ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը, սխալ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ և 277-րդ հոդվածները:

Նշված պնդումները բողոք բերողը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

24.10.1995թ. կնքված նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Է.Անդրյանին պատկանող տան ընդհանուր մակերեսը կազմում է 201.6 քառ. մետր, ըստ սեփականության իրավունքի գրանցման վկայականի՝ ընդհանուր մակերեսը կազմում է 202 քառ. մետր: Է.Անդրյանին պատկանող տարածքի մակերեսը փաստացի կազմում է 195.3 քառ. մետր, այսինքն պակաս է 6.7 քառ. մետրով: Նշված փաստերը հաստատված են 21.01.2010թ. ՀՄ 14913/09 դատաշինարարատեխնիկական փորձագիտության եզրակացությամբ: Է.Անդրյանի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համաձայն՝ իրեն պատկանող տարածքի փոքր կողմերի երկարությունը կազմում է համապատասխանաբար՝ 8.2 և 7.16 քառ մետր: Այսինքն տարածքի մակերեսը պակաս է, ուստի Վարչական դատարանի այն պատճառաբանությունները, որ Է.Անդրյանը զավթել է հայցվորի տարածքը, և որ պակաս տարածքը հնարավոր է տնօրինվում է մեկ այլ անձի կողմից՝ անհիմն են:

Վարչական դատարանի այն պատճառաբանությունը, որ սեփականության իրավունքի գրանցման վկայականի և տեխնիկական անձնագրի մեջ տան ձախակողմյան սահմանագիծը երկու հատակագծերում էլ ուղղագծով անցնում է շինության եզրային պատի ուղղության ամբողջ տարածքով և չի բացառվում, որ ոչ թե պատասխանողը, այլ հայցվորն է զավթել պատասխանողին պատկանող թիվ 5 հավելվածում նշված գծի միջնամասում գտնվող տարածքը, հիմնավոր չէ:

Վարչական դատարանը լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործով առկա բոլոր ապացույցները, դրանով իսկ թույլ տալով առերևույթ դատական սխալ, որն առաջացրել է ծանր նյութական հետևանքներ՝ պատասխանողի սեփականությունը հանդիսացող տարածքը անհիմն տրամադրվել է այլ անձի:

Խնդրում է մասնակիորեն բեկանել Վարչական դատարանի 25.03.2010թ. վճիռը և փոփոխել այն՝ մերժելով Ռոզա Բաբայանի հայցը՝ հողամասը ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու մասին, իսկ դատարանի վճիռը՝ ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման միասնական 4-23 մատյանի 079915 համարի տակ գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասով թողնել օրինական ուժի մեջ:

3. Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.

Հայցվորի ներկայացուցիչը գտնում է, որ վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Բողոք բերող անձը համարում է, որ բողոքի քննության համար էական նշանակություն ունի այն փաստը, որ ըստ 07.06.2007թ. թիվ 073508 սեփականության իրավունքի գրանցման վկայականի, իրեն պատկանող հողամասը պետք է կազմի 202 քառ մետր՝ փաստացի 195.3 քառ. մետրի փոխարեն, որ տարածքի երկարությունը պետք է կազմի 8.15 մետր՝ 8.2 մետրի փոխարեն, և գտնում է, որ հնարավոր չէ պարզել կադաստրային գործում առկա տեխանձնագրի տվյալների համապատասխանությունը 17.01.1990թ. թիվ 134 ամբողջ տան տեխանձնագրի տվյալներին, որ Վարչական դատարանը հանգել է սխալ հետևության, հաշվի չառնելով հայցվորին պատկանող սենյակի մուտքի դռնից 0.68 մետր լայնությամբ և ամբողջ սահմանագծի երկարությամբ ընդհանուր 7.4 քառ. մետր տարածքը Էմմա Անդրյանի կողմից ապօրինի օգտագործելու հարցում:

Բողոք բերողի նշված պատճառաբանություններն անհիմն են, քանի որ անգամ իրեն պատկանող սեփականության իրավունքի գրանցման վկայականում բաժանարար գիծն ուղիղ է:

Վիճահարույց առանձնատան և կից տնամերձ հողամասի կողմերի բաժնեմասերի գնումից և փորձագետի եզրակացությունից պարզ է դառնում, որ բողոք բերողի կողմից կառուցված թիվ 5 սենյակը և սահմանագծի ողջ երկարությամբ 0.68 մետր լայնությամբ քարե ցանկապատը փակում է հայցվորի սենյակը մուտք գործելու միակ դուռը, զրկելով նրան իր սեփականությունը մուտք գործելու, տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու հնարավորությունից:

4. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1. Ըստ 24.10.1995թ. նվիրատվության պայմանագրի հիման վրա տրված 07.06.2007թ. թիվ 073508 սեփականության իրավունքի գրանցման վկայականի՝ Է.Անդրյանին սեփականության իրավունքով պատկանում է Ստեփանակերտ քաղաքի Մ.Նեյման փողոցի թիվ 28 բնակելի տան աջակողմյան մասը և տնամերձ հողամասը /շենքի տվյալները՝ 120.77 քառ. մետր, հողամասի՝ 0.0202 հա/:

2. Է.Անդրյանի կողմից փաստացի զբաղեցրած տարածքը կազմում է 195.3 քառ. մետր, ինչը չի համապատասխանում նվիրատվության պայմանագրին և 07.06.2007թ. թիվ 073508 սեփականության իրավունքի գրանցման վկայականի /դա հաստատված է նաև սույն գործով նշանակված դատաշինարարատեխնիկական փորձաքննության 21.01.2010թ. ՀՄ 14913/09 եզրակացությամբ/:

3.«Հողամասը հետ պահանջելու մասին» ըստ էության քաղաքացիաիրավական հայցապահանջը Վարչական դատարանը քննել և դատական ակտ է կայացրել վարչական դատավարության կարգով:

5. ԼՂՀ Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով սույն բողոքը նշված հիմքերի սահմաններում, ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ այն մասնակիորեն հիմնավոր է և ենթակա է մասնակիորեն բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Հայցվորը Վարչական դատարան է ներկայացրել երկու պահանջ, որոնցից մեկն ընդդատյա է վարչական, իսկ մյուսը՝ որպես քաղաքացիաիրավական, ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին:

Դատաքննության ընթացքում հայցվորը հրաժարվել է իր առաջին պահանջից: Դատարանն այդ մասով կարճել է գործի վարույթը, իսկ մյուս պահանջի մասով հայցը բավարարել:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ Գերագույն դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե Գերագույն դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ բողոքում բարձրացրած հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար...

Բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելու նպատակը ԼՂՀ Սահմանադրության գերակայության և օրենքի միատեսակ կիրառության ապահովման ԼՂՀ Գերագույն դատարանի՝ ԼՂՀ Սահմանադրության 113-րդ հոդվածի երրորդ մասով սահմանված գործառույթի իրացումն է: Այդ առումով ԼՂՀ Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Վարչական դատարանի վերանայվող վճռի հիմնավորվածությունը և օրինականությունը գնահատելու համար անհրաժեշտ է առաջին հերթին պատասխանել հետևյալ հարցին՝ արդյոք Վարչական դատարանն իրավասու էր վարչական պահանջի մասով հայցվորի՝ հայցից հրաժարվելու պատճառաբանությամբ գործի վարույթը կարճելու դեպքում, քաղաքացիաիրավական մյուս պահանջը քննել վարչական դատավարության կարգով:

ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Գնահատելով նշված սահմանադրական դրույթում՝ «իր գործի...քննության իրավունք» ձևակերպումն անձի դատական պաշտպանության արդյունավետության ապահովման և դատավարական, սահմանադրական ու օրենսդրական երաշխիքների պահպանման տեսանկյունից՝ ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ այն ներառում է բոլոր այն փոխկապակցված պահանջների համակցված քննությունը, որն ունի մեկ նպատակ՝ այդ գործի շրջանակներում անձի խախտված իրավունքների վերականգնումը գործի արդյունավետ, ամբողջական և բազմակողմանի քննության պայմաններում:

ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ դատարան է ներկայացվել հայցադիմում, որը վերաբերում է տարբեր դատարաններին ընդդատյա միմյանց հետ կապված մի քանի պահանջներով վեճին, ապա գործը քննում է այն դատարանը, որին ընդդատյա է հիմնական պահանջը, այսինքն այն պահանջը, որի լուծման արդյունքում կայացված դատական ակտը կանխորոշում է հետևանք ներկայացնող պահանջների լուծման ելքը:

ԼՂՀ Գերագույն դատարանը միաժամանակ ընդգծում է, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է հանդիսանում անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատյան օրենքով հանձնված է տվյալ գործը: ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է գործերի առարկայական ընդդատյան իր կանոնները, իսկ նշված հոդվածի երկրորդ մասով օրենսդիրը Վարչական դատարանին ընդդատյա գործերի շրջանակից բացառել է այն գործերը, որոնք ընդդատյա են Գերագույն դատարանին:

Սույն գործով հայցվորը ներկայացրել է երկու փոխկապակցված /վարչական և քաղաքացիաիրավական/ պահանջներ: ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ Վարչական

դատարանի կողմից վարչական դատավարության կարգով երկու փոխկապակցված պահանջների քննելն արդարացված էր, քանի որ նպաստում է արդարադատության արդյունավետության ապահովմանը:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճն ընդդատյա չէ Վարչական դատարանին: Մինչդեռ, սույն գործով հիմնական հայցապահանջի մասով վարչական գործի վարույթը կարճելով, Վարչական դատարանը շարունակել է քննել հայցային դիմումը մյուս՝ քաղաքացիաիրավական պահանջի մասով և ըստ էության դատական ակտ է կայացրել վարչական դատավարության ընթացակարգով: Դրանով Վարչական դատարանը թույլ է տվել էական դատական սխալ, որով խախտվել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետը, ինչպես նաև անձի՝ օրենսդրի կողմից նախատեսված վարչական և քաղաքացիական դատավարության առանձնահատուկ ընթացակարգով դատական ակտը բողոքարկելու իրավունքը: Նշված դատական սխալը բավարար հիմք է հանդիսանում Վարչական դատարանի վերանայվող դատական ակտն այդ մասով բեկանելու համար:

Բացի դրանից, ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

Վարչական դատարանը բավարարել է հայցապահանջը՝ չպարզելով, թե ինչում է կայանում պատասխանողի սեփականության իրավունքի գրանցման վկայականում նշված և փաստացի տիրապետվող տարածքի մակերեսների անճշտությունը, այսինքն՝ պատասխանողի մոտ 5.3 քառ. մետր տարածքի փաստացի պակաս լինելու պատճառը և հայցվորի հողամասը պատասխանողի կողմից ապօրինի օգտագործելու առկայությունն ու իսկությունը:

ԼՂՀ Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վարչական դատարանի հետևությունն այն մասին, որ «չի բացառվում, որ 5.3 քառ. մետր պակաս տարածքը տնօրինվում է մեկ այլ ուրիշի կողմից», պատճառաբանված և գործի նյութերով հիմնավորված չէ, ուստի և չի կարող դրվել վճռի հիմքում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկության կարգով գործի քննության ժամանակ Գերագույն դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Չաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործի վարույթը կարճելու մասով վերանայվող դատական ակտը չի բողոքարկվել, ԼՂՀ Գերագույն դատարանն այդ մասով Վարչական դատարանի 2010թ. մարտի 25-ի դատական ակտին չի անդրադառնում:

ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ Վարչական դատարանի կողմից թույլ տված դատավարական օրենքի խախտումներն էական են, քանի որ դրանք հանդիսանում են վարչական և քաղաքացիական դատավարության իրավունքի սկզբունքների խախտումներ, որոնք թույլ են տրվել դատական քննության ժամանակ, և անվերապահորեն ազդել են գործով ըստ էության ճիշտ դատական ակտ կայացնելու վրա, ուստի վճռի բեկանման և գործը ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ քաղաքացիական դատավարության կարգով նոր քննության ուղարկելու հիմք են հանդիսանում:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, ԼՂՀ Գերագույն դատարանը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Էմմա Անդրյանի ներկայացուցիչ Արմեն Թարխանյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակի. ԼՂՀ Վարչական դատարանի 25.03.2010թ. վճիռը՝ հողամասն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու մասով բեկանել և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ քաղաքացիական դատավարության կարգով քննելու համար:

Վճիռը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Զ.ՕՀԱՆՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ